# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 54-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 22-ի N 275-Ա որոշումը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել Ալավերդի համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 29-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Ալավերդի համայնքի 2019 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոց, 14-30/1 հասցեում գտնվող 8.51 քմ մակերեսով նկուղն աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գինը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Թումանյան փողոց, N 83/3 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/6-6/1 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

6. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ Սանահին Սարահարթ թաղամաս, N 3/16-58/1 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

7. Ալավերդի համայնքի տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

9. Ալավերդի համայնքի ավագանու 25.12.2018թ. N 96-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

10. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/8-48 հասցեում գտնվող, 43.1 քմ մակերեսով տարածքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գինը հաստատելու համար:

(Զեկ. Ս. Խեչումյան)

11. Ալավերդի քաղաքի անվանափոխության մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | | | |
| 2. | Արմեն | Կարապետյան | | | |
| 3. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 4. | Արայիկ | Ձավարյան | | | |
| 5. | Հարություն | Ձավարյան | | | |
| 6. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 7. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 8. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 9. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 10. | Վալերի | Վարոսյան | | | |
| 11. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» օգոստոսի 2019 թվական, N 55-Ն

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Ալավերդի համայնքի 2019 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի ընթացիկ ծախսերն ավելացնել 1415.0 հազ. դրամով, որից՝ օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման ծախսերն ավելացնել 140.0 հազ. դրամով (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, h/h 900262161038, հոդված 4213), ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ այլ դասերին չպատկանող բնագավառի ծախսերն ավելացնել 1275.0 հազ. դրամով (բաժին 01, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121057, հոդված 4213՝ 950.0 հազ. դրամ, հոդված 4241՝ 25.0 հազ. դրամ, հոդված 4252՝ 300.0 հազ. դրամ):
   1.2 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի կապիտալ ծախսերը նվազեցնել 37.7 հազ. դրամ, որից՝ օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման ծախսերը նվազեցնել 3.0 հազ. դրամ (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, h/h 900262161038, հոդված 5122), ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ այլ դասերին չպատկանող բնագավառի ծախսերը նվազեցնել 34.7 հազ. դրամ (բաժին 01, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121057, հոդված 5129):
   1.3 Տնտեսական հարաբերություններ բնագավառի ոռոգում բաժնի կապիտալ ծախսերը նվազեցնել 1963.5 հազ. դրամ (բաժին 04, խումբ 2, դաս 4, ծրագիր 51, h/h 900262000905, հոդված 5113՝ 1961.0 հազ. դրամ, 5134՝ 2.5 հազ. դրամ):
   1.4 Տնտեսական հարաբերություններ բնագավառի տրանսպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ բաժնի կապիտալ ծախսերը նվազեցնել 465.5 հազ. դրամ (բաժին 04, խումբ 8, դաս 5, ծրագիր 52, h/h 900262121305, հոդված 5134):
   1.5 Հանգիստ, մշակույթ, կրոն բնագավառի մշակույթի տներ, ակումբներ և կենտրոններ բաժնի կապիտալ ծախսերը նվազեցնել 800.0 հազ. դրամ (բաժին 08, խումբ 2, դաս 3, ծրագիր 51, h/h 900262329033, հոդված 5122):

1.6 Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող) բաժնի ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերն ավելացնել 100.0 հազ. դրամով (բաժին 08, խումբ 6, դաս 1, ծրագիր 55, h/h 900262121362, հոդված 4239):
1.7 Կրթության բնագավառի նախադպրոցական կրթություն բաժնի կապիտալ ծախսերը նվազեցնել 5000.0 հազ. դրամ (բաժին 09, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121289, հոդված 5113):
1.8 Տնտեսական հարաբերություններ բնագավառի ճանապարհային տրանսպորտ բաժնի կապիտալ ծախսերն ավելացնել 16072.2 հազ. դրամ (բաժին 04, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, h/h 900262504021, հոդված 5112՝ 3755.8 հազ. դրամ և 5113՝ 12316.4 հազ. դրամ):
1.9 Համայնքի 2019 թվականի պահուստային ֆոնդից պակասեցնել 9320.5 հազ. դրամ (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, h/h 900262577027, հոդված 4891):
1.10 Համայնքի 2019 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում նախատեսել 7805.5 հազ. դրամ (խումբ 49, ենթախումբ 01, h/h 900265121534):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | | | |
| 2. | Արթուր | Դավթյան | | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 5. | Արայիկ | Ջավարյան | | | |
| 6. | Հարություն | Ջավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 56-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով, հաշվի առնելով, որ հողամասի նկատմամբ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.06.2006թ. N 1084-Ն որոշումով սխալմամբ չի փոխանցվել Ալավերդի համայնքին՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ կապված սուբյեկտի անճշտությունների ուղղման համար Ալավերդի համայնքի Աքորի գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ 0.04 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-022-0101-0118-ից առանձնացված) հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | [signature] | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | [signature] | | |
| 5. | Արայիկ | Զավարյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | Հարություն | Զավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 57-Ն

### ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, 14-30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 8.51 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԿՈՒՂՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը և Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու Սայաթ-Նովա փողոց, 14-30/1 հասցեում գտնվող 8.51 քմ մակերեսով նկուղը՝ 96.0 հազար դրամ մեկնարկային գնով:
2. Հանձնարարել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին (նախագահ՝ Ս. Խեչումյան).
   - 2.1 Վերը նշված գույքի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել օրենքով սահմանված կարգով.
   - 2.2 Աճուրդի անցկացման պայմանների ու ժամկետների մասին լրատվության միջոցներով տեղյակ պահել ազգաբնակչությանը և տնտեսավարող սուբյեկտներին:
3. Բոլոր վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության արժույթով:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | [signature] | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Արայիկ Զավարյան | | | |
| 6. | Հարություն Զավարյան | | | |
| 7. | Լաուրա Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» օգոստոսի 2019 թվական, N 58-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, N 83/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնք, Թումանյան փողոց, N 83/3 հասցեում գտնվող, արդյունաբերական կառուցապատման նշանակության 42.0 քմ մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
3. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Արմեն Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան Հովհաննիսյան | | | |
| 5. | Արայիկ Ձավարյան | | | |
| 6. | Հարություն Ձավարյան | | | |
| 7. | Լաուրա Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 58-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ

# Ց Ու Ց Ա Կ

## ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկա-գիրը | Մակե-րեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հո-ղա-տեսք | Գործառ-նական նշանակու-թյունը | Մեկնար-կային գինը | Սահմա-նափա-կումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պահեստ կառուցելու | Թումանյան փողոց, N 83/3 | 06-002-0163-0013 | 42.0 | Արդյունաբերու-թյան, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նշանակության | - | Արդյունա-բերական կառուցա-պատման | 126000 դրամ | չկա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵԶՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 59-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, N 2/6-6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնք, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/6-6/1 հասցեում գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության 45.0 քմ մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
3. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Արմեն | Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 5. | Արայիկ | Ջավարյան | | | |
| 6. | Հարություն | Ջավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 59-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ

# Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

## ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկա-գիրը | Մակե-րեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հո-ղա-տեսք | Գործառ-նական նշանակու-թյունը | Մեկնար-կային գինը | Սահմա-նափա-կումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ավտոտնակ կառուցելու | Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/6-6/1 | 06-002-0161-0167 | 45.0 | Բնակավայրերի | - | Բնակելի կառուցա-պատման | 135000 դրամ | չկա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» օգոստոսի 2019 թվական, N 60-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, N 3/16-58/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնք, Սանահին Սարահարթ թաղամաս, N 3/16-58/1 հասցեում գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության 54.0 քմ մակերեսով հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
2. Հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
3. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 15000 դրամ և քայլի չափ՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | | | |
| 2. | Արթուր | Դավթյան | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Արմեն | Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 5. | Արայիկ | Զավարյան | | | |
| 6. | Հարություն | Զավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵԶՈՒՄՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 60-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ

# Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

## ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկա-գիրը | Մակե-րեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հո-ղա-տեսք | Գործառ-նական նշանակու-թյունը | Մեկնար-կային գինը | Սահմա-նափա-կումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ավտոտնակ կառուցելու | Սանահին Սարահարթ թաղամաս, N 3/16-58/1 | 06-002-0054-0259 | 54.0 | Բնակավայրերի | - | Բնակելի կառուցա-պատման | 162000 դրամ | չկա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                                        Ա.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 61-Ն

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10, 11 հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**.

1. Ալավերդի համայնքի տարածքում 2020 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են միասնական դրույքաչափեր:
3. Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի և վճարների դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:
4. Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 01-ից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | [signature] | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Արայիկ | Ձավարյան | | | |
| 6. | Հարություն | Ձավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՋՈՒՄՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ալավերդի համայնքի տարածքում 2020 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

**1. Տեղական տուրքեր.**

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

*հիմնական օբյեկտների համար՝*

ա) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

բբ) 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

բգ) 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

բդ) 3000-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100 000 դրամ:

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3 000 դրամ.

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5 000 դրամ:

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3 000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5 000 դրամ:

1.4 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 դրամ:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 դրամ:

1.6 Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝ 60 000 դրամ:

1.7 Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20 000 դրամ.

1.8 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 դրամ:

1.9 Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 16000 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 70000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 60000 դրամ:

1.10 Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

1.11 Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 80 000 դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
ե) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

1.12 Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

**ա) հիմնական շինությունների ներսում՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ:

**բ) ոչ հիմնական շինություններում՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

1.13 Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանել 5 000 դրամ:

1.14 Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝

ա) ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 /երկու հազար/ դրամ.

բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.

գ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ) այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 /հազար հինգ հարյուր/ դրամ.

ե) Ալավերդի համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանել տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% -ի չափով.

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 % ի չափով.

1.15 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանել 100 000 դրամ:

1.16 Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ՝ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանել 10 000 դրամ:

1.17 Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանել 500 000 դրամ:

1.18 Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
   ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 դրամ,
   բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 դրամ,
   գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 դրամ,
   դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 դրամ:

1.19 Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել 50 000 դրամ:

1.20 Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար սահմանել տեղական տուրք՝
   ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար ՀՀ դրամ,
   բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազար ՀՀ դրամ:

Սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, բացառությամբ 3-րդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել 1.5 անգամ, բացառությամբ 1.1 - 1.3-րդ կետերի:

1.1 - 1.3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքներում կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերում՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերում՝ 1.0-3.0 գործակիցների կիրառմամբ:

**2. Տեղական վճարներ.**

2.1 Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 15 000 դրամ:

2.2 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 15 000 դրամ:

2.3 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 15 000 դրամ.

2.4 Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի)

նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 դրամ.

2.5 Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար սահմանել 15 000 դրամ.

2.6 Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ.

2.7 Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել՝
- կենցաղային աղբի տեղափոխման վճար յուրաքանչյուր անձի համար ամսական 150 դրամ.
- ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի 1 քմ մակերեսի համար 20 դրամ:

2.8 Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել.
- առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով 1 քմ մակերեսի համար 100 դրամ.
- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ 1 քմ մակերեսի համար 50 դրամ.
- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ մակերեսի համար 15 դրամ.
- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1 քմ մակերեսի համար 15 դրամ.
- շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով.
- ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
  ա/ ըստ ծավալի՝ 1 $մ^3$ աղբի համար 3 000 դրամ կամ
  բ/ ըստ զանգվածի՝ 1 տոննա աղբի համար 10 000 դրամ:

2.9 Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, ջրի վճար սահմանել 1 $մ^3$ 155 դրամ:

2.10 Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց

փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի ոռոգման ջրի վճար սահմանել.

- 0 - 500 քմ մակերես ունեցող հողամասի համար 300 դրամ.
- 500 - 1000 քմ մակերես ունեցող հողամասի համար 500 դրամ.
- 1000-2000 քմ մակերես ունեցող հողամասի համար 1 000 դրամ.
- 2000-3000 քմ մակերես ունեցող հողամասի համար 1 500 դրամ.
- 3000-5000 քմ մակերես ունեցող հողամասի համար 2 000 դրամ.
- 5000-10000 քմ մակերես ունեցող հողամասի համար 5 000 դրամ.
- 10000 և ավելի քմ մակերես ունեցող հողամասի համար 10 000 դրամ:

2.11 Ալավերդի համայնքի վարչական տարածքում նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վճար մեկ ամսվա համար սահմանել 5 000 դրամ:

2.12 Ալավերդի համայնքի վարչական տարածքում համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ երաժշտական և արվեստի դպրոցների ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել՝

ա/ դաշնամուրային բժնի համար՝ 3 500 դրամ.

բ/ լարային, փողային և վոկալ բաժինների համար՝ 3 000 դրամ.

գ/ ժողգործիքների բաժնի համար ՝ 2 000 դրամ.

դ/ «II գործիք» ոչ պարտադիր ֆակուլտատիվ առարկայի ուսուցման համար՝ 500 դրամ.

- «Ալավերդու քաղաքային համայնքի Ալբերտ Պապոյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 1 000 դրամ.
- «Ալավերդու ըմբշամարտի դպրոց» ՀՈԱԿ-ում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 1 000 դրամ.
- «Ալավերդու քաղաքային համայնքի Օլեգ Գորբունովի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ ում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 1 000 դրամ:

2.13 Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ:

2.14 Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց, փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ:

2.15 Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատում է համայնքի ավագանին՝ մեկ ավտոմեքենայի համար 200 դրամ:

2.16 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար վճար սահմանել՝ մեկ փաստաթղթի համար 1 000 դրամ:

2.17 Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝

2.17.1 Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ 500 դրամ:

2.17.2 Ծննդօգնության համար.

ա/ թեթև միջամտության համար՝ 1000 դրամ.

բ/ ծանր միջամտության համար՝ 5000 դրամ:

2.17.3 Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների).

ա/ մանր կենդանու համար՝ 100 դրամ.

բ/ խոշոր կենդանու համար՝ 200 դրամ:

2.17.4 Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարելու համար՝ 200 դրամ:

2.17.5 Ախտահանության 1 քմ-ի համար՝ 200 դրամ:

2.17.6 Միջատազերծման (դեզինսեկցիա) 1 քմ-ի համար՝ 100 դրամ:

2.17.7 Կրծողների ոչնչացման (դեռատիզացիա) 1քմ-ի համար՝ 200 դրամ:

2.17.8 Արհեստական սերմնավորման համար՝ 5000 դրամ:

2.17.9 Կենդանու հերձման համար.

ա/ մանր կենդանու համար՝ 1000 դրամ.

բ/ խոշոր կենդանու համար՝ 3000 դրամ:

2.17.10 Կենդանու բուժման՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելության համար՝ 1000 դրամ:

2.17.11 Կենդանու նախասպանդային զննման համար՝ կախված կենդանու տեսակից.

ա/ մանր կենդանու համար՝ 1000 դրամ.

բ/ խոշոր կենդանու համար՝ 2000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 62-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի 16.08.2019թ. նիստի N 14 եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և Ալավերդի համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 10-օրյա ժամկետում, բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | [signature] | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | [signature] | | |
| 5. | Արայիկ | Ձավարյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | Հարություն | Զավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

Հավելված
Ալավերդի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 29-ի N 62-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՄԱՅՐԵՐԻ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Մերի | Արմենի | Երզնկյան | - 10.0 հազար դրամ |
| 2. | Տաթև | Վահանի | Հորոսյան | - 10.0 հազար դրամ |
| 3. | Արմինե | Պողոսի | Փափազյան | - 10.0 հազար դրամ |
| 4. | Հռիփսիմե | Վաչիկի | Մկրտչյան | - 10.0 հազար դրամ |
| 5. | Աստղիկ | Լևոնի | Ներսիսյան | - 10.0 հազար դրամ |
| 6. | Ռոզա | Ռոբերտի | Մարգարյան | - 10.0 հազար դրամ |
| 7. | Զինա | Պարույրի | Մամաջանյան | - 10.0 հազար դրամ |
| 8. | Սոնա | Վոլոդյայի | Մեջլումյան | - 10.0 հազար դրամ |
| 9. | Արաքսյա | Սեդրակի | Մնացականյան | - 10.0 հազար դրամ |
| 10. | Ռիմա | Գարիկի | Եղիկյան | - 10.0 հազար դրամ |
| 11. | Աստղիկ | Վոլոդյայի | Թամազյան | - 10.0 հազար դրամ |
| 12. | Լիլիթ | Գառնիկի | Հովհաննիսյան | - 10.0 հազար դրամ |
| 13. | Լուսինե | Թադևոսի | Ծատինյան | - 10.0 հազար դրամ |

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Լիդա | Սարգսի | Նասիբյան | - 20.0 հազար դրամ |
| 2. | Ֆլորա | Գագիկի | Վարոսյան | - 20.0 հազար դրամ |
| 3. | Գագիկ | Ժորայի | Գևորգյան | - 20.0 հազար դրամ |
| 4. | Ռուբիկ | Վարդանի | Մուրադյան | - 15.0 հազար դրամ |
| 5. | Աշոտ | Գարեգինի | Ծատինյան | - 15.0 հազար դրամ |
| 6. | Արուս | Բենիամինի | Թամազյան | - 15.0 հազար դրամ |
| 7. | Համիկ | Ներսեսի | Ասլանյան | - 15.0 հազար դրամ |
| 8. | Սոնա | Արարատի | Փիրուզյան | - 15.0 հազար դրամ |
| 9. | Գայյա | Սանասարի | Դանիելյան | - 15.0 հազար դրամ |
| 10. | Գայանե | Վասիլի | Զավարյան | - 10.0 հազար դրամ |
| 11. | Արմեն | Վրթանեսի | Ավետյան | - 10.0 հազար դրամ |
| 12. | Սիրվարդ | Միսակի | Գալստյան | - 10.0 հազար դրամ |
| 13. | Ռիտա | Մհերի | Ղազարյան | - 10.0 հազար դրամ |
| 14. | Մարինե | Սերժիկի | Սոսյան | - 10.0 հազար դրամ |
| 15. | Արթուր | Ռաֆիկի | Ստեփանյան | - 10.0 հազար դրամ |
| 16. | Անահիտ | Կարապիսի | Ափոյան | - 10.0 հազար դրամ |
| 17. | Վանիկ | Հարությունի | Կոնինյան | - 10.0 հազար դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| 18. Նինա | Արամայիսի | Մուրադյան | - 10.0 հազար դրամ |
| 19. Նունե | Գագիկի | Սարգսյան | - 10.0 հազար դրամ |
| 20. Աննա | Հրաչիկի | Թաթոյան | - 10.0 հազար դրամ |
| 21. Արմինե | Արծրունի | Դալլաքյան | - 10.0 հազար դրամ |
| 22. Սվետլանա | Արամայիսի | Էվոյան | - 10.0 հազար դրամ |
| 23. Ռիտա | Սենիկի | Պեպանյան | - 10.0 հազար դրամ |
| 24. Հայարփի | Գուրգենի | Նալբանդյան | - 8.0 հազար դրամ |
| 25. Սերյոժա | Շահոյի | Հակոբյան | - 5.0 հազար դրամ |
| 26. Վոլիկ | Հակոբի | Կոլոլյան | - 5.0 հազար դրամ |
| 27. Լևոն | Վաչագանի | Թամազյան | - 5.0 հազար դրամ |
| 28. Նունե | Արարատի | Օհանյան | - 5.0 հազար դրամ |
| 29. Սերինե | Հովիկի | Թաթոյան | - 5.0 հազար դրամ |
| 30. Սուսաննա | Մացակի | Սարգսյան | - 5.0 հազար դրամ |
| 31. Գրետա | Բաղալի | Պապյան | - 5.0 հազար դրամ |
| 32. Վարսիկ | Ալիբեկի | Ավետյան | - 5.0 հազար դրամ |
| 33. Ռիմա | Ավագիմի | Վարտանյան | - 5.0 հազար դրամ |
| 34. Տաթևիկ | Սարգիսի | Շամբարյան | - 5.0 հազար դրամ |
| 35. Սամվել | Սարգիսի | Գրիգորյան | - 5.0 հազար դրամ |
| 36. Իրինա | Ալեքսեևնա | Գևորգյան | - 5.0 հազար դրամ |
| 37. Գոհար | Հայկազի | Հովսեփյան | - 5.0 հազար դրամ |
| 38. Անահիտ | Վասլի | Խասիկյան | - 5.0 հազար դրամ |
| 39. Նորայր | Հայկազի | Ասլանյան | - 5.0 հազար դրամ |
| 40. Իննա | Վիլյամի | Զախարյան | - 5.0 հազար դրամ |
| 41. Շուշիկ | Մովսեսի | Նավասարդյան | - 5.0 հազար դրամ |
| 42. Վարդանուշ | Դուրմիշի | Դանիելյան | - 5.0 հազար դրամ |
| 43. Էմմա | Հովհաննեսի | Ոսկանյան | - 5.0 հազար դրամ |
| 44. Ռոբերտ | Սանդրոյի | Գորգինյան | - 5.0 հազար դրամ |

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

| | | | |
|---|---|---|---|
| 1. Արմեն | Ալբերտի | Աղաբեկյան | - 50.0 հազար դրամ |

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» օգոստոսի 2019 թվական, N 63-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.12.2018Թ. N 96-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

Ալավերդի համայնքի ավագանու 25.12.2018թ. «Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքից որպես հանրակացարան տարածքներ անհատույց օգտագործման և սեփականության իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 96-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «վերաբնակեցման համար նվիրաբերել» բառերը փոփոխել նոր՝ «կատարել նվիրատվություն» բառերով:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբեյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | [signature] | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | [signature] | | |
| 5. | Արայիկ | Ձավարյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | Հարություն | Զավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 64-Ն

## ՀԱՄԱՅՆՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, N 1/8-48 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 43.1 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը և Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել բաց դասական աճուրդային եղանակով օտարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/8-48 հասցեում գտնվող 43.1 քմ մակերեսով տարածքը՝ 179.0 հազար դրամ մեկնարկային գնով:
2. Հանձնարարել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին (նախագահ՝ Ս. Խեչումյան)
   2.1 Վերը նշված գույքի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել օրենքով սահմանված կարգով:
   2.2 Աճուրդի անցկացման պայմանների ու ժամկետների մասին լրատվության միջոցներով տեղյակ պահել ազգաբնակչությանը և տնտեսավարող սուբյեկտներին:
3. Բոլոր վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության արժույթով:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | [signature] | | |
| 2. | Արթուր | Դավթյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Արմեն | Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 5. | Արայիկ | Ջավարյան | | | |
| 6. | Հարություն | Ջավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » օգոստոսի 2019 թվական, N 65-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 22.08.2019թ. թիվ 02/107.3/06058-2019 գրությունը, հաշվի առնելով Ալավերդի քաղաքի անվանափոխության մասին առաջարկը մերժելու Ալավերդի համայնքի ավագանու 14.04.2010թ. թիվ 13-Ա որոշումը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

Մերժել Ալավերդի քաղաքի անվանափոխության մասին առաջարկը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Արտուշ | Աբելյան | | | |
| 2. | Արթուր | Դավթյան | | | |
| 3. | Արմեն | Կարապետյան | | | |
| 4. | Սեյրան | Հովհաննիսյան | | | |
| 5. | Արայիկ | Ձավարյան | | | |
| 6. | Հարություն | Ձավարյան | | | |
| 7. | Լաուրա | Մելիքսեթյան | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | Ալիկ | Նասիբյան | | | |
| 9. | Դավիթ | Նոնինյան | | | |
| 10. | Սվետլանա | Պետրոսյան | | | |
| 11. | Վալերի | Վարոսյան | | | |
| 12. | Վիգեն | Քառյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ